ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2023 թվականի N 87 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N 265-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը հաստատելու, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմին սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 112-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 265-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման հավելվածի 1-ին բաժնի աղյուսակի՝

ա. «Մ-17» պայմանանիշի և համարի տողում «90.8» թվերը փոխարինել «92.0» թվերով,

բ. «Ընդամենը» տողի «1821.12» թիվը փոխարինել «1822.32» թվով.

2) որոշման հավելվածի 2-րդ բաժնի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝

ա.

Հ-95	Մ-2 (Նորավան) – Լծեն – Տաթև	39

բ. «Հ-94» պայմանանիշի և համարի տողում «Ավտոճանապարհի անվանումը» սյունակի բովանդակությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

/Մ-2/ (Գորիս)-/Մ-2/ (Շինուհայր)

գ. «Ընդամենը» տողի «1932.11» թիվը փոխարինել «1971.11» թվով.

3) որոշման հավելվածի 3-րդ բաժնի «3.8. Սյունիքի մարզ» ենթաբաժնի՝

ա. ստորև նշված պայմանանիշի և համարի տողերը շարադրել նոր խմբագրությամբ՝

Տ-8-10	/Հ-95/ - Շամբ – Շամբի ջրամբարի պատվար (մարգարիտա)	3.2
Տ-8-18	/Մ-2/-Հալիձոր	0.5
Տ-8-17	/Մ-2/ (Շինուհայր) – Խոտ - /Մ-2/ (Որոտան)	11.6
Տ-8-20	/Մ-2/ (Վերին Խոտանան)-Ներքին Խոտանան-/Տ-8-59/	6.7
Տ-8-35	/Մ-2/-Քաշունի	3.5
Տ-8-36	/Մ-2/-Տանձատափ	2.0
Տ-8-37	/Մ-2/-Սվարանց	4.1
Տ-8-38	/Մ-2/-Նորաշենիկ	0.8
Տ-8-39	/Մ-2/-Շրվենանց	1.2
Տ-8-40	/Մ-2/-Աճանան	0.7
Տ-8-48	/Հ-95/ - Դարբաս – Շենաթաղ	14.2
Տ-8-50	/Հ-95/ - Որոտան – /Հ-95/	2.5
Տ-8-52	Սիսիան – Աղիտու - /Հ-95/	7.9
Տ-8-59	Անտառաշատ-Օխտար-/Մ-2/	6.5
Տ-8-92	/Մ-2/ - Վաղատին - /Հ-95/	5.8
Տ-8-95	/Մ-2/-Տաթև	0.7
Տ-8-98	/Մ-2/-Նոր Առաջաձոր-/Տ-8-97/	9.4

բ. «Տ-8-111» պայմանանիշի և համարի տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով՝

Տ-8-112	/Մ-2/ (Քաշունի գյուղի խաչմերուկ) - /Տ-8-58/ (Բարձրավան)	7.5
Տ-8-113	/Մ-2/ (Տանձավեր) – /Մ-2/ (Շուռնուխ)	12.9

գ. ուժը կորցրած ճանաչել հետևյալ տողերը՝

Տ-8-49	/Տ-8-48/ - Լծեն	6.0
Տ-8-51	/Մ-2/ - Նորավան – /Տ-8-52/	3.8
Տ-8-93	Լծեն – Տաթև	15.4

դ. «Ընդամենը» տողի «499.7» թիվը փոխարինել «494.6» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ